

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	9
5.1. Բյուջեի եկամուտները	9
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ և վարկեր	15
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	17
8. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի առաջին ամիսներին ՀՀ տնտեսության վերականգնումը սպասվածից արագ էր տեղի ունենում: Այդ պայմաններում ապրիլ ամսին գրանցվեց բավական բարձր տնտեսական ակտիվության ցուցանիշ, որը մասամբ պայմանավորված էր նախորդ տարվա ապրիլի խոր անկմամբ: Սակայն, մայիս ամսից սկսած տնտեսական ակտիվության աճի տեմպը զգալիորեն դանդաղել է: Այսպես, մայիս ամսին գրանցվել է տնտեսական ակտիվության 10.9% ցուցանիշ, իսկ հունիսին՝ 8.0%: Հատկանշական է, որ հունիսին տնտեսական ակտիվության աճի տեմպը նվազել է նույնիսկ արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման պայմաններում (ընտրությունների գործընթացը սովորաբար ունենում է դրական տնտեսական էֆեկտ գովազդային, տպագրական, տրանսպորտային և այլ գործունեությունների աճի շնորհիվ): Այդ պայմաններում, կուտակային՝ հունվար-հունիս ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 5.0%՝ հունվար-մայիսի համեմատ արագանալով ընդամենը 0.7 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ եթե հաշվի չառնենք բազայի էֆեկտը, այսինքն՝ 2021թ. ցուցանիշը համեմատենք 2019թ. հունվար-հունիս ամիսների ցուցանիշի հետ, ապա աճը կստացվի գրեթե զրոյական՝ ընդամենը 0.07% (հունվար-ապրիլին տնտեսական ակտիվության աճը 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 2.8%, իսկ հունվար-մայիսի աճը՝ 0.1%):


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2021թ. հունվար-հունիս ամիսների ՏԱՑ-ի 5.0% աճն առավելապես պայմանավորված է առևտրի ոլորտում տնտեսական ակտիվության աճով, որի նպաստումը կազմել է 2.9 տոկոսային կետ: Մնացած ոլորտները նույնպես ունեցել են դրական նպաստում տնտեսական ակտիվությանը, որոնցից ամենամեծը եղել է գյուղատնտեսության նպաստումը՝ 0.7 տոկոսային կետ, իսկ արդյունաբերության,


ծառայությունների և շինարարության նպաստումները կազմել են 0.6-ական տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-հունիս ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության աճը նույնպես զգալիորեն դանդաղել է 2021թ. հունիսին: Մայիսին գրանցված 7.9% աճի փոխարեն հունիսին գրանցվել է 1.3% աճ, ինչի արդյունքում դանդաղել է նաև կուտակային աճը: Այսպես, հունվար-հունիս ամիսների արդյունաբերության աճը կազմել է 2.1%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով:

2021թ. հունվար-մայիս ամիսների տվյալներով¹ արդյունաբերության աճը կազմել է 2.3%, որին 1.7 տոկոսային կետով նպաստել է հանքարդյունաբերության 8.4% աճը: Նույն ժամանակահատվածում մշակող արդյունաբերության թողարկումը նվազել է 1.4%-ով, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 0.9 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերում գրանցվել է աճ համապատասխանաբար 10.0% և 4.5%, որոնց նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է համապատասխանաբար 1.5 և 0.1 տոկոսային կետ:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության աճը ապրիլի կտրուկ արագացումից հետո մայիս և հունիս ամիսներին կտրուկ դանդաղել է: Շինարարության ծավալները մայիսին աճել են ընդամենը 0.5%-ով, իսկ հունիսին՝ 1.3%-ով՝ ապրիլի 87.7%-ի համեմատ: Նախորդ տարվա մայիս և հունիս ամիսներին շինարարության անկումը կազմել էր համապատասխանաբար 27.0% և 23.3%: Այսինքն՝ շինարարության աճերը նույնիսկ այդպիսի մեծ բազայի էֆեկտի պարագայում պահպանվում են բավական ցածր մակարդակում: Արդյունքում դանդաղում է նաև կուտակային աճի տեմպը, որը հունվար-հունիս ամիսներին կազմել է 10.8%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ դանդաղելով 3.5 տոկոսային կետով:

¹ Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-հունիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

2021թ. հունվար-հունիս ամիսների շինարարության ծավալները 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են շուրջ 15.1%-ով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում նույնպես գրանցվել է աճի դանդաղում:


Ծառայությունների աճը հունիսին կազմել է 12.0%, այն դեպքում, երբ նախորդ տարվա հունիսին գրանցված անկումը կազմել էր 16.4%: Հունվար-հունիս ամիսների աճը 2020թ. համեմատ կազմել է 2.7%, սակայն 2019թ. նույն ամիսների համեմատ ծառայությունների ոլորտի թողարկումը նվազել է շուրջ 4.5%-ով:

Հունվար-մայիս ամիսների տվյալներով² ծառայությունների աճը կազմել է 0.9%, որին առավելապես նպաստել է «կացություն և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղի շուրջ 48.4% աճը (նպաստումը կազմել է 2.5 տոկոսային կետ): Ծառայությունների ոլորտի աճին շուրջ 9.7 տոկոսային կետով հակազդել է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի շուրջ 37.1% անկումը: Ծառայությունների մնացած ենթաճյուղերն ունեցել են դրական դինամիկա՝ ընդհանուր աճին նպաստելով միջին հաշվով շուրջ 0.8 տոկոսային կետի չափով:

² Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-հունիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում ապրիլին գրանցված կտրուկ աճը նույնպես չի պահպանվել և մայիս-հունիս ամիսներին գրանցվել է աճի տեմպի դանդաղում: Հունիս ամսին առևտրի ծավալների աճը նախորդ տարվա հունիսի համեմատ կազմել է 10.3%՝ մայիսի ցուցանիշի համեմատ դանդաղելով 7.3 տոկոսային կետով: Հունվար-հունիս ամիսների աճը կազմել է 8.0%, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում առևտրի ոլորտի անկումը կազմել էր 11.1%: 2019-ի նկատմամբ առևտրի ծավալները 2021թ. հունվար-հունիս ամիսներին նվազել են շուրջ 4.0%-ով:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %




Արտահանման ծավալների աճի տեմպը նույնպես դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակում: 2021թ. հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ապրանքների արտահանման ծավալն աճել է 33.1%-ով, ինչի արդյունքում արտահանման կուտակային աճը արագացել է՝ հասնելով 23.3%-ի: 2019թ. համեմատ արտահանման աճը նույնպես բարձր է և կազմում է շուրջ 16.0%:

Հունվար-մայիս ամիսների տվյալներով³ արտահանման 20.8% աճից 11.8-ը պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի արտահանման շուրջ 34.5% աճով (ինչն էլ իր հերթին պայմանավորված է մետաղների միջազգային գների աճով): Արտահանմանը դրական նպաստում են ունեցել նաև «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «մանածագործական իրեր» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.9, 2.5 և 2.2 տոկոսային կետ:

Արտահանման աճին հակազդել է «սարքեր և ապարատներ» (անկումը՝ 57.4%) և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ 10.9%) ապրանքախմբերի արտահանման ծավալների անկումը, որոնք ընդհանուր արտահանման աճին հակազդել են համապատասխանաբար 1.6 և 1.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալների աճի տեմպը ապրիլ և մայիս ամիսների համեմատ հունիսին զգալիորեն դանդաղել է: 2021թ. հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալներն աճել են 12.2%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 23.9 տոկոսային կետով: Հունվար-հունիս ամիսների

³ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-հունիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

կուտակային աճը կազմել է 7.9%, սակայն, եթե այդ ցուցանիշից հանենք բազայի էֆեկտը, ապա կուտակային ցուցանիշը կլինի բացասական՝ 6.7%-ի չափ՝ արտացոլելով տնտեսությունում դեռևս չվերականգնված պահանջարկը:

2021թ. հունվար-մայիս ամիսների տվյալներով⁴ ներմուծման աճին հիմնականում նպաստել են «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.1, 1.5 և 1.4 տոկոսային կետ: Ներմուծման աճին շուրջ 0.8 տոկոսային կետով հակազդել է «պատրաստի սնունդ» ապրանքախմբի ներմուծման անկումը, որը կազմել է 9.0%:

ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են 2021թ. նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում 2021թ. հունվար-մարտ և հունվար-մայիս ամիսների ներմուծման ցուցանիշները բարելավվել են համապատասխանաբար 0.1 և 0.3 տոկոսային կետով:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-մայիս ամիսներին միջին աշխատավարձերն աճել են և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում⁵: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 4.4%-ով՝ կազմելով 195,452.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 3.7%-ով և կազմել 167,568.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.6%-ով՝ կազմելով 208,958.0 դրամ:

⁴ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-հունիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:


⁵ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը օպերատիվ տվյալների հրապարակման հետ միասին: Փոխարենը, աշխատավարձի տվյալները հրապարակվում են ավելի ուշ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը
2020-2021թթ. հունվար-մայիս ամիսներին, %**



4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**





2021 թվականի հունվար-հունիս ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն արժեզրկվել է ինչպես ԱՄՆ դոլարի և եվրոյի, այնպես էլ ՌԴ ռուբլու նկատմամբ: Հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամը զգալիորեն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն վերջին ամիսներին, հատկապես՝ հունիսին, արժեզրկման տեմպը դանդաղել է: Արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 7.4% և 15.4%: Հարկ է նշել, որ արժեզրկման տեմպը էապես թուլացել է հունիսի վերջում: Այսպես, եթե դիտարկենք հունիսի վերջին օրվա դրությամբ գրանցված փոխարժեքը, ապա այն նախորդ տարվա նույն օրվա համեմատ ավելի բարձր է ընդամենը 2.7%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը տարեսկզբից ունեցել է արժևորման միտում, որը, սակայն, աստիճանաբար դանդաղել է: Հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 0.5%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁶


5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը շարունակել է արագանալ: Ընդհանուր եկամուտները 2021թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 10.3%-ով՝ կազմելով 790.9 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճը նույնպես կազմել է 10.3%, իսկ հարկային եկամուտների ծավալը կազմել է 750.2 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճի տեմպը հունվար-հունիսին զգալիորեն արագացել է հունվար-մայիսի համեմատ՝ շուրջ 4.4 տոկոսային կետով:

⁶ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Բյուջեի այլ եկամուտները հունվար-հունիս ամիսներին աճել են 6.9%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 79.8%-ով: Վերջինս, սակայն, բացարձակ թվով բավական փոքր է. 2020թ. հունվար-հունիսի համեմատ պաշտոնական դրամաշնորհները 2021թ. նույն ժամանակահատվածում աճել են 1.9 մլրդ դրամով՝ կազմելով 4.3 մլրդ դրամ:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հունվար-հունիս ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 13.6%), մաքսատուրքի (աճը՝ 42.4%) և շահութահարկի (աճը՝ 11.8%) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.3, 1.9 և 1.7 տոկոսային կետ: Նկատենք, որ հարկային եկամուտների աճը ապահովող երեք գործոններից երկուսը կապված չեն տնտեսական իրավիճակի և հարկային վարչարարության հետ: Այսպես, մաքսատուրքերի աճը պայմանավորված է ԵԱՏՄ երկրների ընդհանուր ներմուծման աճով, իսկ շահութահարկի աճը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, որոնց համաձայն նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հարկատուները ազատվել էին շահութահարկի կանխավճար իրականացնելու պարտավորությունից: Օրենսդրական փոփոխություններով է պայմանավորված նաև սոցիալական վճարների 90.5% աճը (տարեսկզբից բարձրացվել են սոցիալական վճարների դրույքաչափերը), որն ընդհանուր հարկային եկամուտների աճին նպաստել է 1.4 տոկոսային կետով:


Տնտեսական ակտիվությամբ է պայմանավորված հարկային եկամուտներին զգալի նպաստում ունեցող ԱԱՀ-ն, որը, սակայն, 2019-ի հետ համեմատությամբ դրսևորում է աճի դանդաղման միտում՝ հունիսին գրանցելով 3.5% աճ՝ մայիսի 4.7%-ի փոխարեն:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-հունիս		2021թ. հունվար-հունիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-4.6	-4.6	10.3	10.3
ԱԱՀ	-7.3	-2.4	13.6	4.3
Շահութահարկ	-14.3	-2.3	11.8	1.7
Եկամտային հարկ	2.2	0.6	1.9	0.6
Ակցիզային հարկ	5.5	0.4	-16.9	-1.3
Շրջանառության հարկ	10.7	0.2	-2.2	0.0
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	18.3	0.6	17.0	0.7
Մաքսատուրք	-26.8	-1.5	42.4	1.9
Սոցիալական վճար	15.3	0.2	90.5	1.4
Այլ հարկային եկամուտներ	5.9	0.1	84.0	1.4
Պետական տուրք	-12.8	-0.3	12.4	0.3

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը պահպանվում է բարձր մակարդակում: 2021թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջեից

իրականացվել է 866.3 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավելի է 13.2%-ով:

Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ ծախսերի 9.6%, այնպես էլ կապիտալ ծախսերի մոտ 1.7 անգամ աճով: Ընդ որում, հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի ծավալը աճել էր մարտ ամսին (միայն մարտ ամսին կատարվել է մոտ 41 մլրդ դրամի կապիտալ ծախս), ինչը պայմանավորված է ռազմական ծախսերի իրականացմամբ (ՀՀ ՊՆ շենքային պայմանների բարելավում), իսկ ապրիլ-հունիս ամիսներին կապիտալ ծախսերի աճը բավական փոքր է: Այսպես, մայիսին կապիտալ ծախսերը նվազել են նախորդ տարվա մայիսի համեմատ շուրջ 23.4%-ով, իսկ հունիսին կապիտալ ծախսերի աճը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 10.4%:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդը հունիս ամսվա ընթացքում գրեթե չի փոխվել: 2021թ. հունվար-հունիս ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի պակասուրդ՝ 75.5 մլրդ դրամի չափով, որը հունվար-մայիս ամիսների ցուցանիշից բարձր է ընդամենը 0.7 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ զգալի մեծ լինելով հանդերձ, պակասուրդը հեռու է բյուջեով ծրագրավորված ցուցանիշից, որը հունվար-հունիս ամիսների համար կազմում է 179.0 մլրդ դրամ:


5.4. Պետական պարտք

2021թ. հունիսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 8,869.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունիսի նկատմամբ աճելով 14.9%-ով: Միևնույն

Ժամանակ, դրամով արտահայտված պետական պարտքն աճել է 18.0%-ով՝ հասնելով 4,393.5 մլրդ դրամի:

Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ դոլարային արտահայտությամբ 16.0%-ով, իսկ դրամային արտահայտությամբ 19.1%-ով: Պարտքի աճի տեմպի դանդաղումը հունվար-ապրիլի համեմատ հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով՝ նախորդ տարվա մայիս-հունիս ամիսների պարտքի կտրուկ աճով: Կառավարության պարտքի ծավալը հունիսի վերջի դրությամբ նախորդ տարվա հունիսի համեմատ աճել է շուրջ 1.2 մլրդ ԱՄՆ դոլարով, իսկ 2020թ. վերջի նկատմամբ՝ 892.4 մլն ԱՄՆ դոլարով: Պարտքի աճը առավելապես տեղի է ունեցել արտաքին պարտքի հաշվին:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը մայիսին փոքր-ինչ դանդաղելուց հետո հունիսին կրկին արագացել է: 12-ամսյա գնաճն ընթացիկ տարվա հունիսին կազմել է 6.5%՝ նախորդ ամսվա նկատմամբ արագանալով 0.6 տոկոսային կետով: Գնաճային միջավայրին արձագանքելով՝ ՀՀ ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը մայիս և հունիս ամիսներին 0.5-ական տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.5%: Ընդհանուր առմամբ ընթացիկ տարվա ընթացքում ԿԲ-ն բարձրացրել է տոկոսադրույքը 1.25 տոկոսային կետով: ԿԲ քաղաքականությունը, ինչպես նաև հունիսի վերջից դրսևորվող ՀՀ դրամի արժևորումը կարող են նպաստել գնաճի տեմպի դանդաղմանը հետագա ամիսներին:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021թ. հունիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը մնացել է նույն մակարդակում: Հունիսի վերջի դրությամբ ավանդների ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 9.1%-ով: Վերջին ամիսներին ավանդների ծավալների աճի արագացումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նույն ամիսներին ավանդների դուրսբերման հետևանքով ցածր բազայի ձևավորմամբ:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2021թ. հունիսին ավանդների աճը հիմնականում պայմանավորված է եղել ձեռնարկությունների ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 6.7 տոկոսային


կետ: Աճին նպաստել են նաև տնտեսության այլ հատվածների ավանդների աճը, որոնց շարքում նշանակալի է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է 1.1 տոկոսային կետ: Ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները նույնպես փոքր ինչ աճել են՝ ընդհանուր ավանդների աճին ունենալով 0.5 տոկոսային կետով դրական նպաստում, սակայն 2020թ. դեկտեմբերի համեմատ ոչ ռեզիդենտների ավանդները նվազել են շուրջ 9.7%-ով, կամ 100.5 մլրդ դրամով:

Վարկերի աճի տեմպը հունիսին կտրուկ դանդաղել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) աճը 2021 թվականի հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ եղել է գրեթե զրոյական՝ կազմելով 0.4% և մայիսի համապատասխան ցուցանիշի համեմատ դանդաղելով 5.0 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ




Վարկերի փոքր դրական աճը ապահովվել է հիպոթեքային և շինարարության ոլորտներին տրամադրվող վարկերի աճի հաշվին, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.0 և 2.1 տոկոսային կետ: Վարկերի աճին բացասական նպաստում է ունեցել սպառողական վարկերի նվազումը, որի նպաստումը կազմել է -2.3 տոկոսային կետ:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

COVID-19-ի երեք ալիքներից հետո համաճարակային իրավիճակը որոշակիորեն բարելավվել է, սակայն նկատվում են որոշակի վատթարացման միտումներ: 2021թ. հուլիսին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը որոշակիորեն աճել է հունիսի համեմատ՝ կազմելով 147 դեպք, որը դեռևս զգալիորեն ցածր է մարտ-ապրիլ ամիսների ցուցանիշներից:

Աշխարհի մյուս երկրների համեմատությամբ ՀՀ-ում տիրող իրավիճակը նույնպես բարելավվել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով հուլիսին Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 44-րդ տեղը՝ նախորդ ամսին զբաղեցրած 40-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով՝ 34-րդը՝ նախորդ ամսվա 33-րդ տեղի փոխարեն:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. հուլիսի 27-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Տարեսկզբին տնտեսության վերականգնման՝ սպասվածից արագ տեմպը չի պահպանվել վերջին ամիսներին:** Մայիս-հունիս ամիսներին տնտեսական ակտիվության աճի տեմպը զգալիորեն դանդաղել է բոլոր ոլորտներում: Շինարարության, ծառայությունների և առևտրի ոլորտներում 2021թ. ցուցանիշներն ավելի ցածր են, քան 2019թ. համապատասխան ամիսներին, ինչը նշանակում է, որ այդ ոլորտներում տնտեսական վերականգնումը բավական դանդաղ է տեղի ունենում: Արդյունաբերության ոլորտում դրական աճը պահպանվում է հանքարդյունաբերության հաշվին, սակայն վերջին ամիսներին այդ ենթաճյուղում նույնպես դրսևորվում է աճի դանդաղման միտում: Հետևաբար, կարելի է փաստել, որ 2021թ. առաջին վեց ամիսներին տնտեսական միտումները մտահոգիչ են, և այս տեմպով շարունակման պարագայում տնտեսությանը դժվարությամբ կհաջողվի մոտ լինել 2019թ. արդյունքներին:

2. **Պետական բյուջեի փաստացի ցուցանիշները շարունակում են չհամապատասխանել բյուջեով նախատեսված ցուցանիշներին:** Կապիտալ ծախսերն իրականացվում են շատ ցածր ծավալով, ինչը բացասաբար է ազդում տնտեսական ակտիվության վրա՝ դանդաղեցնելով տնտեսական վերականգնումը: Բացի այդ, պլանավորվածից բավական փոքր է բյուջեի պակասուրդը, ինչը մի կողմից դրական է՝ կառավարության պարտքի կայունության տեսանկյունից, սակայն չի համապատասխանում հարկաբյուջետային քաղաքականության նպատակներին: Այսպես, պակասուրդի փոքր լինելը նշանակում է, որ

հարկաբյուջետային քաղաքականությունն ավելի քիչ խթանող է, քան նախատեսվել էր բյուջեով, ինչն իր հերթին բացասաբար է ազդում տնտեսության վրա: Հատկապես վերականգնման փուլում, հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է ավելի հետևողական և արդյունավետ լինի, մինչդեռ փաստացի իրականացվող քաղաքականությունը չունի այդ հատկությունները:

3. Գնաճի տեմպը շարունակում է մնալ բարձր: Թեև մայիս ամսին գնաճի տեմպը փոքր-ինչ դանդաղել է, սակայն հունիսին կրկին արագացել է՝ հանգեցնելով բնակչության իրական եկամուտների կրճատմանը: Գնաճի վրա դրական ազդեցություն կարող է ունենալ ընթացիկ տարվա հունիսի վերջից նկատվող՝ ՀՀ դրամի արժևորման միտումը, սակայն գնաճային ռիսկերն առկա են՝ կապված միջազգային շուկաներում գնաճի բարձր տեմպի, վառելիքի գների բարձրացման և գյուղատնտեսական ապրանքների առաջարկի կրճատման հետ:

4. Հունիս ամսվա տվյալներով կտրուկ նվազել է վարկավորման տեմպը: Հունիսին վարկերի աճը նախորդ տարվա հունիսի նկատմամբ կազմել է ընդամենը 0.4%, ինչը նշանակում է, որ վարկերի ծավալը գրեթե չի աճել: Եթե հաշվի առնենք նաև, որ այդ փոքր աճը պայմանավորված է հիմնականում հիպոթեքային վարկերի աճով, ապա կարող ենք նշել, որ տնտեսության իրական հատվածը վարկեր գրեթե չի ստանում: Բացի այդ, զգալիորեն աճել են ձեռնարկությունների կողմից բանկերում ներդրված ավանդների ծավալները: Այս ամենը խոսում է այն մասին, որ տնտեսությունում բավական ցածր ակտիվություն է՝ հատկապես ցածր է ներդրումային ակտիվությունը, քանի որ կազմակերպություններն իրենց ունեցած գումարները ներդնում են բանկերում՝ որպես ավանդ, և նոր ռեսուրսներ չեն ներգրավում: Բնականաբար, երկարաժամկետում այս իրավիճակը կհանգեցնի տնտեսական աճի հետագա դանդաղմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: